ՔԱՀԱՆԱՅԻՑ ՀԱՎԱՔ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 16-17-ը Ս. Ղևոնդյանց քահանայից տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ քահանաների ավանդական հավաքը, որին մասնակցում էին թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ և շուրջ 300 քահանաներ: Այս առիթով Մայր Աթոռ էին եկել ոչ միայն Հայաստանի թեմերի հոգևոր սպասավորները, այլև Սփյուռքից՝ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմից, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի, Անգլիայի, Ռումինիայի, Հարավային Ռուսաստանի, Ուկրաինայի, Արգենտինայի, Վրաստանի հայոց թեմերից, Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակությունից ներկայացուցիչ քահանա հայրեր: Հավաքի ընդհանուր խորագիրն էր «Հայ Եկեղեցու առաքելությունը հայ ինքնության կերտման և պահպանման գործում»:

Փետրվարի 16-ին քահանայից հավաքը սկսվեց Մայր Տաճարում՝ Ճաշու ժամերգությամբ, որից հետո ճեմարանի հանդիսությունների դահլիճում Նորին Սրբության աղոթքով բացվեց առաջին նիստը:

Ողջույնի խոսքով հոգևոր դասին դիմեց հավաքի կազմակերպիչ, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը: Սրբազան Հայրն ընդգծեց նման հավաքների անհրաժեշտությունը մտքերի և հոգևոր փորձառության փոխանակման համար:

Այնուհետև օրվա թեմային նվիրված զեկուցումներով հանդես եկան Տ. Զարեհ վարդապետ Կաբաղյանը (Գուգարաց թեմ), Տ. Արտակ ավ. քհն. Սիմոնյանը (Արմավիրի թեմ), Տ. Փառեն քահանա Առաքելյանը (Շիրակի թեմ), Տ. Պսակ քահանա Մկրտչյանը (Գեղարքունիքի թեմ) և Տ. Վիգեն քահանա Մանուկյանը (Արագածոտնի թեմ):

Ծավալված քննարկումից և օրվա արդյունքների ամփոփումից հետո ամենքը մասնակցեցին երեկոյան ժամերգության:

Հավաքը շարունակվեց փետրվար 17-ին, Սրբոց Ղևոնդյանց քահանայից տոնին: Այս առիթով Միածնաէջ Մայր Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Կոտայքի թեմի Նոր Հաճնի հոգևոր հովիվ Տ. Արսեն քահանա Համբարձումյանը:

Այնուհետև հավաքի թեմայի շուրջ ևս երեք զեկուցումներ հանձնվեցին քահանայից դասի ուշադրությանը: Զեկուցողներն էին Տ. Շահե քահանա Հայրապետյանը (Արարատյան հայրապետական թեմ), Տ. Մինաս քահանա Մովսիսյանը (Արցախի թեմ) և Տ. Սմբատ քահանա Սարգսյանը (Կոտայքի թեմ):

Երկօրյա նիստերի արդյունքում քննարկման առարկա դարձան ժամանակակից մարտահրավերները՝ աշխարհականացման և անձնապաշտության գործընթացները, արարչասպեղծ աշխարհը խեղող զանազան մեղքերն ու մոլությունները, ազգային և կրոնական ինքնությունների սահմանների վերացման միտումները, որոնք վտանգում են դարերով թրծված և քրիստոնեական մեր սուրբ հավատով շաղախված ազգային ինքնության անաղարտ նկարագիրը:

Հոգևորականաց դասը շեշտեց աստվածսիրությունը և հայրենասիրությունը իբրև առանցք ազգային ինքնության, որոնցից ծնունդ է առել մեր ժողովրդի ողջ արժեքային համակարգը՝ ազգային, հոգևոր ու մշակութային մեր թանկ ժառանգությունը: Ժողովականները հաստատեցին, որ ինչպես Հայաստանում, այնպես և Սփյուռքում հայ ինքնության կերտման ու ձևավորման մեջ կարևոր և անփոխարինելի դերակատարություն ունի Հայ Առաքելական Եկեղեցին՝ իր բազմադարյա ավանդությամբ, փորձառությամբ և ի Սփյուռս աշխարհի տարածյալ իր կառույցների ընձեռած հնարավորություններով:

Հավաքը փակվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: Վեհափառ Հայրապետը վերստին շնորհավորեց հոգևորականաց դասին Ղևոնդյանց քահանայից տոնի առիթով և անսասան հավատի և արդյունաշատ ծառայության իր բարեմաղթանքները բերեց ամենքին: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանին և թեմական առաջնորդներին՝ քահանայից հավաքի կազմակերպմանը բերած աջակցության համար:

Ամենայն Հայոց Հայրապետը մեր ինքնության հիմնաքարը նկատեց Վարդանանց «Վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» նշանաբանով պսակված արժեքային համակարգը, որի պահպանությանն ու զորացմանը պիտի շարունակվեն ուղղվել Հայ Եկեղեցու ջանքերը: Նորին Սրբությունը հորդորեց եկեղեցականներին առավել եռանդով ու նախանձախնդրությամբ իրականացնել իրենց հովվական ծառայությունը, որպեսզի նոր մարտահրավերների փորձություններին ընդառաջ մեր Եկեղեցին հաջողությամբ պսակի իր Քրիստոսատուր առաքելությունն աստվածասեր մեր ժողովրդի կյանքում:

Ապա տեղի ունեցավ շնորհաբաշխություն: Տոնի առիթով Նորին Սրբությունը պասնվեց քահանաների շնորհեց լանջախաչ կրելու իրավունք, երեք քահանաների տրվեց ավագության պատիվ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՔԱՀԱՆԱՅԻՑ ՀԱՎԱՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ.
ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՊԱՐԳԵՎԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ
ՉԵՌԱՄԲ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

ՔՀԱՆԱՅԻՑ ՀԱՎԱՔԻ ՍԱՄՆԱԿԻՑՆԵՐԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ

ՔԱՀԱՆԱՅԻՑ ՀԱՎԱՔԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

ՔԱՀԱՆԱՅԻՑ ՀԱՎԱՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ